



# ԲԱՇԱՌԱՎԱԿԵՊ

Թ. ՏՄԴԻ ԹԻՒ 15.

1854

ՕԳՈՆՏՈՍԻ 1.

## ՀԱԴԵՑԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԵԴԱՐՁ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄՐԳՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԵՒ ԱՆՈՒՅ ԸՆԿԵՐԱԿԻՅ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԱՆ

Այս տարի որ մեր Աքակունեաց թագաւորութեան երկհազարեակ դարձն է, նոյնակա փառաւոր և աւելի սրտառուց ու սրբազան դարձ մ'ալ ունի, ըլլալով հնգետասաններորդ դարեդարձ նահատակութեան քաջ և սուրբ Ա արդանանց (431-1854): Աման 1400 տարի սրացան անցան այն երկնապանծ և երկրապանծ յիշատակէն ետև, և գեռիք երեկուան դիպուած մը կը յիշէ հայրենասէր և ազնուասիրտ հայ մը իր կարմիր Ա արդանը և անոր նահատակակիցքը, և սիրան կը բարձրանայ: (Կ)ը հնեալ են սուրբ եկեղեցի և հայրապետքն հայոց, որ այն վեհ անձանց գեղեցիկ յիշատակն տարուէ տարի տօն կարգելով անմոռաց ըրին:

Եւ ինչպէս պիտի մոռցուէր այն

հրեղէն յիշատակը՝ զոր երկիր կը պաշտէ, երկինք կը պատուեն, երանի կուտան բարեկիրժ ազգեր այն ժողովը զեան՝ որ ասանկ նահատակներ ունեցեր է, որոնք երկրիս վրայ դիսցազնացեալ երկրէս վեր աստուածացեր են, երկրաւոր և երկնաւոր հայրենեաց ալհաւասար կտրիճզօրականք ըլլալով: (Ա)վ պարծիր Ա արդանանց անուամբ՝ հայէ, հայ որ չի պարծիր Ա արդանանց փառօք՝ մարդ չէ: (Ծաղ պարծեսցին Ա արդանք և վարդանասէրը:

(Վ) արտասուաշարժ միանգամայն և ուրախարար Աքակալեան դաշտ, ով ողբախառն և փառաւոր հովիտք Աւարայրի, ով մշտաշարժ սահանակարկաջ հառաշամայն Արասխ, որ ժամանակին պէս անհանգիստ դարէ դար կը վազես այն

Հովհաններուն մէջ՝ ուր 66,000 քաջ  
Հայկազունք տասն բիւր Պարաից դէմ  
կուրծք գրին, ուր 1036 նահատակը  
Հայրենեաց և եկեղեցւոյ մէջ հանդէս  
ելլալով լի արդեամբք և աշխատանօք  
տարածուեցան յաւիտենական հանգըս-  
տեան մը, Շաւարշանի թագաւորա-  
կան պարտիզաց ծաղկըներէն ընտիր  
փունջ մը կապուելով, երկնաւոր թագա-  
ւորին զմայլեցուցիչ պսակ. ձեր մէջ տե-  
սուած հանդէսը չէ տեսած արեն ուրիշ  
տեղ, ձեր մէջ թափուած ամէն մէկ ա-  
րեան կաթիլին վրայ դեռ զիշերէ գի-  
շեր արցունք կը թափեն դողդզուն աստ-  
ղեր. Ո՞վ հրապարակ քաջաց, ով հան-  
դիսարան երկնաւոր նահատակաց :

Հարիւր յիսուն տարի աշխատելով  
կ'աշխատէին Հայոց սուրբ Հայրա-  
պետքն՝ քրիստոսաշնորհ սուրբ կրօնից  
հիմն հաստատուն դնելու Հայաստանի  
մէջ. աշխարհ նզոված 'ի Վրիստոսէ,   
հեթանոսական սովորութիւնք և պարս-  
կային ատելութիւնք՝ արգել կ'ըլլային  
կը յոգնեցընէին հայրապետաց անխոնջ  
թեերն. հիմը փորած խորցած, ահագին  
անկիւնաքարը ինջած զետեղելու վրայ  
էր, դժոխք բոլոր զօրութիւնը տուաւ  
Պարսից և ուրացեալ ասակեանց ձեռ-  
քը՝ խափանելու թաղէսեանց և Վրի-  
գորեանց արդիւնքը : Այն ատեն արե-  
նակից Ուսաւորչին Ամիկոնեանն  
Ա արդան ելաւ հանդիսի, հետն առած  
հաւատով և քաջութեամբ վառուած  
Հայ հսկայնէր, որոնք ահագին սու-  
րելնին Ուսոնդեանց խաչերուն վրայ  
սրած՝ վաղեցին Հայոց և Պարսից մէջ,  
երկնից և դժոխոց մէջ, և տեղաւորե-  
ցին Հայ եկեղեցւոյն քարը յաւիտենա-  
կան հիման վրայ, արեան քրտինքով  
շաղուելով չորս կողմի հողը, և նոյն հո-  
ղուն մէջ հանգչեցան քաջութեամբ :  
Երջանիկ հանգստարան գերերջանիկ  
նահատակաց :

Ինչու չներեցին աշխարհաւեր սպառ-  
նալիք բաղդին՝ որ Հայկական երախ-  
տագիտութիւնը Աւարայրի դաշտին  
մէջ ժամանակի դէմ դնող յիշատակաց  
արձան մը կանգնէր, կամ քառանիստ

սրածայր բուրգ մը, կամ բոլորակ երկ-  
նասլաց սիւն մը, կամ ահեղ քարաքամն-  
դակ աւիւծ մը՝ խաչանիշ վահանի վրայ  
թաթերը դրած աչքերէն կրակ ցատ-  
քեցլնելով ցուրտ նայողաց դէմ, կամ  
ահագին լայնատարր քար մը Ճերմակ  
սաւանի պէս փռած հազար քաջաց  
վրայ, վրան ալ բարձր խաչարձան մը՝  
որուն ծայրը ամակերուն խառնուեր և  
պատուանդանին վրայ գրուած ըլլար,

## ՎԱՐԴԱՆԱՑ

ԵՒ ՆԻՉԱԿԱՑԱՑ ՔՍՁԱՑ

Ի ԳԱՅՑՊԱՆՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՑԻՈՑ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՑ  
ՍԱՑԱՆԱԿ ՆԱՀԱՏԱԿՆԵԼՈՑ  
ՈՒԽՏ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՀԽԱՐԴԱ

Ո) Ե որ քաղդին սանձը մեր ձեռքն  
չէ, գոնէ սրտերնուս տէր եմք. թէ որ  
չեմք կրնար տիրաբար արժանավայել  
արձան կանգնէլ, ոսկի գրոշմ զարնել  
'ի յիշատակ Ա արդանանց՝ սակայն ան-  
հատնում են սրտի գանձերն. նոյն իսկ  
սուրբ եկեղեցին կը սրբէ և կը քաջա-  
լերէ մեր եռանդն 'ի պատիւ Ա արդա-  
նանց. Հայ զաւակաց ամենէն աղքատն  
ալ գէթ այրոյն երկու լումային տեղ  
մէկ կաթիլ արցունք մը և շունչ մը հա-  
ռաչանք կրնան նուիրել անոնց :

Խակ մենք այս երկու լումային հետ  
երրորդ մ'ալ աւելցնելով այսօր՝ մեր  
ջախջախ այլ անրեեկ զըռչին ու սրտովն,  
հեռուանց աւետիս կու տանք ազգային  
ժողովոց, և կ'ընծայեմք անոնց 'ի նուեր  
յիշատակի հնգետասաներորդ դարե-  
դարձի նահատակութեան սրբոց Ա ար-  
դանանց, ծանօթութիւն մը՝ ինչուան  
հիմայ անծանօթ մնացած Ա արդանանց  
փառաւոր նահատակակցի մը վրայ, յու-  
րախութիւն ազգասիրաց և հոգեսիրաց  
միանգամայն : Ո՞վ կրնայ Ճմարիտ ազ-  
գասիրութիւնը զատել հոգիէն :

Հին երկաթագիր մատենի մը կողք  
գտանք, աւելի հին մագաղաթեայ եր-  
կաթագրի մասն երկու թուղթ, շատ  
մաշած և ապականած, որ էր Ճաշոց  
զըքի կտոր մը. օրուան կարգն ալ էր

Ա արդանանց տօնը , աշխատութեամբ կարդացինք վերնագիրն , “ Հրովարտից Ե ” սրբոյն Ա արդանա „ . Հին տօնացոյցք Ա արդանանց տօնը Հրովարտից ամսոյն Երեսունին կը գնեն որ Ա արկաւագայ անշարժ տումարով այս (օգոստոսի) ամսուս Տեսն , կամըստ լատինաց 17-ն կ'ինկնայ . իսկ Ա արդանանց նահատակութեան տարին (451) Հրովարտից Երեսունը օգոստոսի վերջը կ'ինկնար , բայց իրենք աւելի առաջ յունիսի 26-ն նահատակուեցան . ուստի տօնը իրենց նշխարաց ամփոփուելուն օրը հաստատուած է : Ա եր գտած ճաշոցը որ խիստ հին կարգաւորութիւն է , վերնագրէն ետև կը գնէ կցորդ սաղմոս “ Ա ամնքո մեռանիմք զօրհանապազ , և այն , և վերջը միայն Խայեայ մարդարէին ընթերցուածը ” ։ յսպէս ասէ տէրց Ա արայէլ , . ուրնոր ճաշոցք անկէ առաջ կ'աւելցընեն առակաց ընթերցուածք մ'ալ , վերջն ալ առաքելական մը . իսկ այս հին օրինակը փսխանակ ատոնց՝ ունի աւելի հետաքննական վարդապետական ընթերցուածք մը , որ է Խղիշէ սուրբ վարդապետին Ա արդանանց պատմութեան Ե յեղանակն , որուն վերնագիրն ալ ալաւելի հետաքննութեան արժանի է . և է այսպէս մանը գեղեցիկ երկաթագրութեամբ .

Վկայութիւն սրբոյն Վարդանա եւ Հմայեկա եւ Վահանա եւ Սահակա հայոց սպարապետաց եւ ամենայն սուրբ արանց որք մեռան՝ ի Քրիստոս .

Ե յս կտոր բանէն երկու մեծ գիտելիք կ'առնումք . նախ՝ թէ առաջին դարերուն մէջ մեր Եկեղեցին սովորութիւն ունի Եղեր պատարագի միջոց կարդալ սրբոյն Խատակներն կամ վարքն՝ արժա

նաւոր վարդապետաց գրուածքներէն՝ յետ մարդարէական և առաքելական ընթերցուածոց : Անչուան հիմայ ալ երեկոյեան ժամերգութեան վերջը սովորութիւն է Հայսմաւուրք կարդալ Հայոց Եկեղեցիներն իւրաքանչիւր օրուան սըրբոց վարքը . Հայսմաւուրքները Հաստատուած մեր Եկեղեցին ունէր Ճառընատիր և Տօնապատճառ զրբերն որ նոյն պէս իւրաքանչիւր օրուան տօնին յիշատակներն ունէր . ասոնցմէ ալ առաջութերորդ դարուն մէջ՝ այն է 747-ն Ա պէնոցաց վանքին առաջնորդն Ա ողոմն՝ Տօնամակ գիրքը շիներ էր , որ է հաւաքումն վարուց սրբոց և ներբողից իւրաքանչիւր աւուր տօնից համար , որ Տօնանամակ ալ հին կ'երեայ Ա արտիրողք գիրքը , այսինքն է Ա արդիրողիոնը ըստ Հունաց , որ է վկայաբանութիւնք . բայց քանի որ դեռ ասոնք չէին կարդադրած՝ մեր Եկեղեցին ճաշոցներուն մէջ կը գրէր աւուր պատշաճ տօնից ճառերն , և անշուշտ այս ճաշոցին կտորն ալ վերոյիշեալ Ա ողոմնէն առաջ գրուած է , որուն հնութեանը բաց ’ի յայտնապէս մագաղաթին երեսութիւն ուրիշաւանական պատճառ ալ կայ որ վերջը տեսնենք : Ե զգային դարրութիւնը ախորժող բանասիրաց զուարծութեան համար հոսդնենք Խղիշէի դրուածքին հատուածն ալ որչափ որ կրնար կարդացուիլ , մնացածը շատ մաշած և խանգարած ըլլալով , որ թէպէտ և կարձ կտոր մ'է , բայց զգալի տարբերութիւն ունի ուրիշնոր օրինակներէ , որոնցմէ մեր վանքը (1842) տարուած օրինակին հետ բաղդատելով դնենք հատուածը .

### ՀՅ ՇԻՆ-Ա ՀԱ-ՀՈՒ

Ա եծ է սէրն Աստուծոյ քան զամենա  
յն սէր երկրաւորս (եւ այն  
պէս) աներկ(եւզ) առնէ զմ  
արդիկ իրբեւ զանմարմինս  
որպէս անտառին ի սկզբա  
նե ի տեսանել բազում  
անգամ ի բազում տեղիս  
սիրովն Աստուծոյ . . .

### ՏԴ-ԳԻՆ

Մ եծ է սէրն Աստուծոյ քան զամենայն  
մեծութիւն երկրաւոր . եւ այն  
պէս աներկեւզս առնէ զմար  
գիկ իրբեւ զանմարմին զօրս հրեշտակաց .  
որպէս անդասին ի սկզբանէ  
է տեսանել զբազում բազում  
անգամ ի բազում տեղիս  
Մ արդիկ որ սիրովն Աստուծոյ . . .

Արկրորդ գիտիվքն է խորագրին մէջ յիշած սրբոց անուանքն , որոնցմէ Աահակն ամեննեին չի յիշուիր մեզի ծանօթ Եղիշեայ օրինակաց մէջ . Հմայեակ և Ա ահանն ալ՝ ըստ մեր կարծեաց չեն Հմայեակն Դիմաքսեան և Ա ահանն Գնունի , զոր Եղիշէ և Ա ազար Փարպեցի կը յիշէն Ա արդանայ Հետընկած նախարարաց մէջ , և Շնորհալին անոնցմէ առած կ'երգէ Դորահրաշ շարականին մէջ . վասն զի հոս յիշեալ նահատակներս Ապարապետք Հայոց կ'ըստին , իսկ Դիմաքսեանն և Գնունին պարզ զօրավարք էին . գարձեալ Ա արդանայ քով հոս յիշուելու համար իրենցմէ առաջ ուրիշ նախարատիւ և մեծարդիւն նախարարք կային , ինչպէս են Եմասկ և Խորէն . այս ետքինս կրնար սպարապետ ըսուիլ որովհետև մեծ ձակատամարտին մէջ ինքն էր երկրորդ գնդին հրամանատարը , ինչպէս առաջին գնդին հրամանատարն ալ էր Դքծրունեաց իշխանն Ա ահան . և ահա՝ ըստ իս ասիկայ է մեր ձաշոցին մէջ յիշուած Ա ահանն : — Խնջու Եղիշէ և Ա ազար չեն յիշեր զայս Ա ահանս : — Գիտեն բանասէրք որ անօրէն պարսիկն կամ ասորին Բարձումա Եղիշէի ձեռնագիր պատմութեան օրինակը առեր էր հեղինակին կարդալու համար . երբոր Եներշապուշ Դքծրունեաց իշխանն վորնտեց զինքը իր երկրէն՝ անզգամն չարութեան համար Եղիշէի գրքին մէջ որչափ որ Դքծրունեաց վրայ գովեստ գտուաւ աւրեց ջնջեց , Ա ահանայ նահատակութիւնն ալ վերուց . երբոր զիլքը աեղը դարձաւ Եղիշէ առ Դքտուած փոխուեր էր , ուրիշներն ալ կարծեցին թէ ինքն է ըրած այն սրբագրութիւններն զբքին վրայ : Բայց մեր իսկ ունեցած Եղիշեայ օրինակներէն կրնանք գուշակել Բարձումայի խարդախութիւնը . վասն վի Եղիշէ ինն նախարարաց հետ 278 հոգւոյ ալ նահատակութիւն յիշելին ետև կ'ըսէ թէ ասոնցմէ զատ Ա յարքունի տաննէն և ՚ի տաննէն Դքծրունաց և յիւրաքանչիւր նախարարաց տաննն .. այլ ևս 740 այր , և այն : Խնջու

հոս յանուանէ միայն զԱքծրունիս կը յիշէ , յայտ է թէ խարդախն Բարձումա զկարենալով բոլորովին Դքծրունեաց յիշատակութիւնը վերցընել Ա ահանայ անունը և իրեն հետ իր ցեղէն մեռնողներուն թիւը վերուց , և մնացած Հայոց ցեղերէն ընկածներուն հետ խառնեց անոնց թիւը գումարելով 740ը , և անոր համար կը հարկազրի հոս յիշել զԱքծրունիս : Ա ազար Փարպեցի 276 հոգի ինը նախարարաց հետ մէկտեղ կը համրէ , 750 ալ զատ , և Եղիշէի պէս բոլորն 1036 կը գումարէ , և ստուգելով գրած կ'ըսէ այս թիւս . բայց կ'երևայ թէ ինքն ալ Եղիշէին աւած է քանի մը բան Բարձումայէն ետև , որովհետև նախարարներուն կարգն ալ յար և նման Եղիշէին պէս կը շարէ , և պատմութիւնը գրած է գոնէ 8 կամ 10 տարի Բարձումային հալածուելէն վերջը : Այս անզգամը կ'երևայ թէ ձեռք խառնած է նաև Եղիշեայ ը յեղանակին մէջ , ուր որ կը յիշէ մոգապետին երազը թէ տեսաւ նահատակեալ նախարարաց իրեքն , զԱ արդան , զԱ քտակ և զԱ յորէն . կարծեմ թէ Դքտակայ տեղ Ա ահան պիտի ըլլար , ասպա թէ ոչ Եղիշէ զԱ յորէնն քան զԱ քտակ առաջ կը դնէր , ինչպէս միշտ ուրիշ տեղուանք : — Այսչափ առ ժամա Ա ահանայ համար :

Անացեալ երկու սրբոց մէջն՝ Հմայեակն ինծի կը թուի թէ հոս ոչ է Դիմաքսեանն , այլ նոյն իսկ Ա արդանայ եղայրն Հմայեակ Վամիկոննեան , որ իր եղբօրը նահատակութենէն քիչ ատեն վերջը՝ քաջութեամբ նահատակուեցաւ Վխցիսայի կողմերն , ինչպէս որ կը պատմէ նոյն Եղիշէ . և ասիկայ ալ սպարապետ կ'ըսուէր մանաւանդ Ա արդանայ մեռնելին ետև : — Իսկ Ա ահակն ովէ . Եղիշէ այս անուամբ նախարար Ա արդանանց գործակից չի յիշեր . ուստի կամ ասիկայ Բազրատունի Ա ահակն է որ Հայոց մարզպան դրուեցաւ և իբր 30 տարի Ա արդանէն վերջ նահատակուեցաւ պատերազմի մէջ , ինչպէս կը պատմէ Ա ազար , և անցաւ տօնելի

սրբոց թիւն . և կամ թէ նոյն Աքքը ու -  
նեաց ցեղէն կամ Եղիշէ յիշեալ սուրբ  
մ'էր զոր Շարծումային խարդախու-  
թիւնը անյիշատակ ըրաւ . վասն զի  
վերնագրին մէջ այս անունը դնեն և  
վերջը Եղիշէայ զրուածքը դնեն՝ կը  
ցուցընէ թէ նոյն ընթերցուածին մէջ  
Այսակն ալ պիտի յիշուէր . բայց ե-  
թէ ըսուի՝ թէ Եղիշէայ ընթերցուա-  
ծէն ետեւ Այսակայ նահատակու-  
թիւնն ալ աւելցուցած էր Ո ազարէն  
կամ ուրիշէ առնելով , որ մեզի այնչափ  
հաւանական չերեար : Իսկ թէ որ  
հարցուի թէ հապա Ո ահանայ յիշա-  
տակութիւնն ուսկից գտեր էր մեր ձա-  
շոյին հեղինակը . — կամ Աքքահամ  
խոստովանողին զրած պատմութենէն  
առեր էր , որ այն ալ ժամանակակից էր  
Եղիշէայ , և կամ թէ Շարծումայէն  
առաջ Եղիշէ տօնասիրաց տուեր էր իր  
պատմութիւնը , մանաւանդ բուն Ո ար-  
դանանց նահատակութեան պատմու-  
թեան գլուխն . վասն զի ինքը շուտով  
զրեց այն պատմութիւնը պատերազմէն  
վերջ , և վերջը աւելցուց ութերորդյե-  
ղանակը . բարեպաշտք ալ շուտով սկսան  
տօնել զլ արդանանս , անոնց վկայա-  
բանութիւնն ալ աւելցընելով ձաշոցաց  
մէջ . այն ատեն Այսակայ վրայ ալ յի-  
շատակութիւն գտնեն կը զիւրանայ :  
Այս ալ յայտնի է որ Եղիշէայ պատ-  
մագրութեան և և Զեղանակներուն  
մէջ զգալի է պակասութիւնը . առջինին  
մէջ Ո . Ո եւսնդայ խօսած երկայն ձաւ  
ուր կիսկատար կ'երենայ և վերջաւորու-  
թիւն չունի . Ո ազար փարպեցին կը յի-  
շէ թէ իր խօսքին մէջ Ո եւսնդ կը յոր-  
դորէր զհայս Ո ուսաւորչայ յիշատա-  
կաւն , այս բանս ալ կը պակսի Եղիշէայ  
մէջ . և անոր տեղ կ'ըսուի թէ Շարծու-  
մայի աւելցուցած շաղփաղիանքն կան  
օրինակի մը մէջ որ յլ չմիածին :

Դառնալով մեր գլխաւոր խնդրոյն և  
համառօտելով բաածնիս , և թողով ըն-  
տրութեան ընթերցողաց կրկնակի կար-  
ծիքներն , ամէնուն ալ հաւանելի կը սե-  
պէմք այս իրեք ձմարտութիւնս . — ա .  
Ուն մեր նախնիք երախտագէտք և

ջերմեռանդք՝ շուտով և անմոռաց կը  
տօնեն եղեր իրենց սուրբերն . — է .  
Ուն առաջի դարերուն սովորութիւն է  
եղեր պատարագի ատեն կարգալ որբոց  
յիշատակներն , որովհետև ժողովրդեան  
բազմութիւնն ալ այն խորհրդոյն ներ .  
կայ կ'ըլլար , և խորհուրդն ալ Ո կայից  
անուամբն կը կատարուէր . — է . Ո ար-  
դանանց անուամբ տօնած 1036 նահա-  
տակաց ինը գլխաւորին անուններն գի-  
տէինք մինչև հիմայ , որ են

Ո արդան Այսմիկոնեան

Խորէն Խորխոռուունի

Աքտակ Պալտւնի

Տաճատ Պանթունի

Հմայեակ Դիմաքսեան

Կերսէհ Քաջրերունի

Ո ահան Պանունի

Աքսէն Խնծայնոց

Դարբեգին Ո բուանձտեան

ասկէ ետեւ տասներորդ մ'ալ պէտք է  
ձանչնանք զլ . Այսակ , և հաւանա-  
կանաբար ժան զլ . Ո ահան Աքքունի  
և ժբ . Ո . Հմայեակ Այսմիկոնեան :

Ո յս որ և է ծանօթութիւնս ըն-  
ծայելով ազգասիրաց , կը համարձակիմ  
անոնցմէ առաջ ձեզի ընծայել ձեր ընկե-  
րաց անուամբ փառաւորութեան փոքր  
յաւելուածն , ովլ լի փառօք և պատուով  
մեծարեալք յլ ստուծոյ և նահատակք  
նորա և Հայ եկեղեցւոյ և Հայրենեաց՝  
սուրբ Ո արդանանք . և այս նուազ յի-  
շատակս կը փափաղիմք նուիրել ձեր  
յաւերժայիշատակ նահատակութեան  
նոր դարեգարձին սկիզբը : Ուն պէտ  
դուք երկնաւոր արքայութեան մէջ  
յաւիտենականութեամբ չափելով կը  
ժապտիք մեր թշուառութիւնը չափող  
ժամանակին տարիներուն և դարերուն  
վրայ , բայց անշուշտ կը յիշէր որ դուք ալ  
այսպէս կը պատուէ , իբ ձեզմէ առջիքիս  
տոսապսակ նահատակները քանի որ եր-  
կրիս վրայ մեզի պէս կը պանդխտէիք :  
Դայեցէք , և նայեցէք ստէպ , նայե-  
ցէք միշտ՝ քաղցր ացքով այն երկրին  
վրայ՝ որուն ապագայ երջանկութեանն  
համար նուիրեցիք իշխանական փառ-

քերնիդ , հարուստ գանձերնիդ , սիրասուն ամուսինքդ ու զաւկըներդ , արիւնիդ և կեանքերնիդ , և միայն հոգինիդ տարիք անդին . բայց այն հոգին որ ձեր ամէն քաջութեան և նահատակութեան գործադիրն էր՝ նոյնը ըլլայ հովանի ձեր արեան քրտանց գին ազգին թափառական մնացորդացը : Ի՞յո , ձեր և ձեր նմանեաց երջանիկ հոգիքն միայն պիտի տան այն ազգին իր ցանկալի վերակենդանութիւնն՝ զրո կը խափանեն երկրաւոր կիլք և մահկանացու հնարք :

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԵԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաղագ Խարժանութեան աստուածաշնուն դասից՝ Ի հայ ընդունաւ :

ԱՌ ճշդիւ գտակաւ 'ի վերայ կալ որպէս և այլուր կանիեալ ասացոք , եթէ որ աւելի հանգամանք հայերէն թարգմանութեան աստուածաշնուն մասենիցն իցեն , արժան է միանդամ յընթերցուն մատչել : Եւ է նա բան և շունչ Աստուծոյ , զրո և 'ի կշիռ բազդասութեան ընդ այլս 'ի գրենոյ ձգել , բնաւ և ոչ կացի ոք յանձն : Եւ թէպէտ 'ի բազմաց սրբազնից արանց յայլ և այլ ժամանակս յօրինեալ և կարգեալ , բայց զի և եթունի կէտնապտակի , զԱստուած ասեմ և զհրաշակերտն յարարածս նորա զմարդկութիւն . և եթէ ոք զայն ընթեռնուցու , թուուի իմն նմա , որպէս և յեկեղեցւոյ վարդապետացն վկայեաց ոք ուրեք , զնոր երկինս բացեալ տեսանելով , յորմէ ճառագայթք աստուածեղէն լուսոյն հատանիցին , առ 'ի լուսաւոր առնել զայս և խտղել միանդամյն . քանզի են են 'ի նմա դարձուածք ճարտարահիւս բանից . և քերթողականին և հռետորականին և իմաստափրական հրահանդաց վայելութիւնք . բայց անմառն և անմարտ 'ի մարդկեղէն ճարտարութեանց , իբրու զնոյն ինքն Աստուած որ ամենակատարն է և աննման :

Անդէն 'ի նախագրունս գրոցն զՄովսէս նկատեմ զաստուածատեան և զաշխարհահամար , որ պանչելահրաշ օրինակաւ զարարածոցն լինելութեան ճառաւ պատմէ . և դյոյն բանիւքն յափշտակէ իմն զմարդ , և առեալ ածէ հուպ յաստուածութիւնն , որ բանիւ լոկով 'ի խաւարէ զըս վերբերէ , և զէսն յոչից դոյացուցանէ . զՄովսէս զհաւատարիմն յամենայն տանն Աստուծոյ , որ երբեմն հրամանատարն է խրայելի ժողովրդեան , երբեմն պատմող փրկութիւնաբեր օրինաց , մերթ հեղ քան զամենայն մարդիկ , և մերթ սպառնալիս շանթից որո-

1 Զառաջն հատածն դաշես յէջ 212 բազմապալի ը ամին :

տալուր բարբառելով , և խաւարին մշտագիշեր աւլուցն զատահակսն մատնելով . և զի զհուսկն ասացից , զՄովսէս՝ զմեծ նախամարդարէն և զարժանի յիշտակագիր աստուածային գործոցն և յուշարար նորա պատուիրանոց : Յոյժ 'ի գէպ գատեցան արդարէ տեղեկագոյնքն և հմուտք 'ի բանասիրաց , որք ընդ քերթողազօրն Յունաց ընդ մեծին չոմերոնի զնա 'ի կշիռ բազդասութեան ածեալ ձեցին . այլ խափր մեծ ընդ արբունիսն իցէ իթակայ և ընդ վրանն Աքրահամու , ընդ ցաւս Անդրսմաքեայ և ընդ վլշտս Ռաքելի :

Եւ յեանորա զիւս օմն տեսանեմ մարդարէ համանան Մովսեսի , և թէպէտ ոչ յազգէ ընտրելոցն Աստուծոյ , բայց քան զընսկրսն և ազնուագոյն գտեալ , որ 'ի վլտահար տառապանացն ձիւնաբերս աստուածային բարութեանցն յիշտակօք զանձն սփոփէր : Խակյաղագս Սավմոսացն և Մողոմնի գրոց զննէ այլ յաւելից ասել . բայց զայն եթէ բարձրելոյն կամբ ընէիննոքօք անդստին 'ի հին ժամանակաց՝ զմարդկութեանս զմիւսանդամ լինելութիւնն աւետարորել . զարտուցելոյ որդւոյն հօն հանդիպել տեսութեան , և հայրենի գթոյն զոչ հանգուրմէլն , այլ կարեկից հիդացելոյն եղեալ զելանելն 'ի տանէ և ընդառաջնիւլութեույն , երկոցուն միանդաման . Աստուծոյ և մարդկան , զիմեանս խնդրելով , և 'ի բուն խակ սերն զմիմեանս գտանելով , որով վիստագարձ զմիմեանս սիլեցին : Երկարագունից արդարէ պէտք էին բանից եթէ կամեցեալ էր զամենայն գեղ աստուածադպեցիկ մարդարէութեանց առնել առաջն առաջն գեղ : « Եւ ոչ նուն հոմերոն , » զի ընդ մեծին գոչեցից եպիսկոպովին Քամզ , » ըէտ , հաւատարութեալ կարիցէ վաեմութեան ոռջոյն , » Մովսիսի 'ի քերթողաբան երդս անդ . և չիք ոք » ՚ի քերթողաբան Յունաց և Հոռոմոց , որ 'ի հատ , » ասարութիւնն ընդ սազմոսէրգովին գալ կերի . » ցի , քանզի և ասելն միայն եթէ « Աստուած ասուուցոց , աէր խօսեցաւ , կոչեաց զերկիր , . ՚ի » վեր քան զմիտս և մարդոյ . և ոչ հոմեր հաւատագորդ ասուուցութիւնն Աստուծոյ յայտնի ցուցանել . որ գարձեալ և զառուարածական քերթութունն բայց բերէ յանձնն զկերպարան , յորժամ զեր , » չանկաւէտ աւուրս խազազութեանն որ Քրիստոսի , յառաջագոյն պատմեսցէ : Եւ իցէ ոք » առ հինսն եղերերգակ քերթող քան զերեմիտս , » յորժամ զերկումն ժողովրդեանն իւրոյ գառանապէտն իմուն եթէ կամ իբրու զնաւաւում , » որ 'ի հնեռուս հոգւուլնիկատէր զկործան թաւագլոր անկանել բարձրապարիսպ գոռողզացելուն 'ի մօսոյ զգունդս զօրացն որ յաւեր և սանել 'ի մօսոյ զգունդս զօրացն որ յաւեր և յապականութիւնն զինուէտացւոց քաղաքն գըր , » նեն , և զշացնան լսել և զշառաշիւն զինուուց նուց . և այնպիսի նկարագիրք են 'ի նմա զարմանալու արժանիք , զի սատորն յոյժ քան զնա զեր , » թողահայրն գտանել ոք ստիպիցի : Ընթերցիր » և զիւանիէլ , յորժամ Բաղդատարայ արքայի , կանխաձայն ազդիցէ զարդարագատ վլէժմիլն , » գրութիւնն Աստուծոյ եկեալ հասեալ . և իւրն , » գրեաթէ կարող իցէս գտանել զոք 'ի հնոցն , » որ զնոյնպիս ախզու կերպարանաց բանից ունին , » ցի : Եւ այնչափ խտիր ընդ արտաքնոցն քերթողս , և ընդ մարդարէս , որչափ ինչ ընդ ճշմարիտ